ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

-- ------- 2024 թվականի №---Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ 2, 2/1, 2/2, 4, 4/1, 4/2, 24 և 4-ՐԴ ՆՐԲ. 1 ՀԱՍՑԵՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Կարապետ Օհանյանը (այսուհետ՝ Դիմող անձ) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Տ. Պետրոսյան փողոց 2, 2/1, 2/2, 4, 4/1, 4/2, 24 և 4-րդ նրբ. 1 հասցեներում գտնվող հողամասերում նախատեսում է կառուցել առանձնատների թաղամաս (այսուհետ՝ Թաղամաս), որի ջրամատակարարման և ջրահեռացման համար «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունից (այսուհետ՝ Մատակարար) ստացել է տեխնիկական պայմաններ, որով Մատակարարի՝ ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգին միացման համար սահմանվել է մեկ կետ: Դիմող անձը հայտնել է, որ հետագա խնդիրներից խուսափելու համար նպատակահարմար է տեխնիկական պայմաններով սահմանել, որ Թաղամասում կառուցվող առանձնատներն ունենան իրենց առանձին միացման կետերը, որպեսզի հետագայում այդ առանձնատների սեփականատերերը հնարավորություն ունենան դառնալ Մատակարարի բաժանորդներ՝ յուրաքանչյուրն իր սահմանազատման կետով,

բ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշման 1-ին կետով սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները (այսուհետ՝ Կանոններ) չեն նախատեսում մեկ հողամասի վրա առանձին շինությունների համար առանձին սահմանազատման կետեր ունենալու հնարավությունը, ու նպատակահարմար է այդ մասով կայացնել Հանձնաժողովի անհատական որոշում,

բ) Մատակարարը սույն թվականի ---------- և Դիմող անձը սույն թվականի ----------ի գրություններով հայտնել են, որ չեն առարկում Մատակարարի՝ ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգին միացման գործընթացը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն, և

հիմք ընդունելով Կանոնների 23-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) Թաղամասի առանձնատների նոր համակարգերը Մատակարարի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգին միացման տրամադրվող (փոփոխվող) տեխնիկական պայմաններում պետք է նախատեսվեն կառուցվող օբյեկտների համար առանձին միացման կետեր, իսկ Թաղամասի սնուցումը կկատարվի մեկ միացման կետից:
   2) Դիմող անձը Կանոնների 15-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությանը համապատասխան Մատակարարին ներկայացվող դիմումին կից պետք է ներկայացնի թաղամասում նախատեսվող օբյեկտների տեղադիրքը ցույց տվող սխեմատիկ հատակագծի կամ հաստատված գլխավոր հատակագծի պատճենը:
   3) Դիմող անձը Թաղամասի բոլոր օբյեկտների համար նախատեսելու է կառուցել նոր համակարգ՝ սահմանազատման կետերում նախատեսելով նաև ջրաչափական հորեր:
   4) Թաղամասում առկա օբյեկտներում առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են Կանոնների 22.1-ին կետով նախատեսված դիմումները ստանալուց հետո:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մատակարարին և Դիմող անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս.ՇԱՀԻՆՅԱՆ**

ք. Երևան

-- ---------- 2024թ.